

**ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆԻ ԱՆՁՆԱԳԻՐ  
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ  
ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԻ ԱՎԱԳ ՄԱՍՆԱԳԵՏ**

<p><b>1 Ընդհանուր դրույթներ</b></p> <p><b>1.1 Պաշտոնի անվանումը ծածկագիրը</b> Հայաստանի Հանրապետության Լոռու Մարզպետարանի (այսուհետ՝ Մարզպետարան) գյուղատնտեսության և բնապահպանության վարչության (այսուհետ՝ Վարչություն) գյուղատնտեսության բաժնի (այսուհետ՝ Բաժին) ավագ մասնագետ (ծածկագիր՝ 95-1.3-Մ3-1)</p> <p><b>1.2 Ենթակա և հաշվետու է</b> Բաժնի ավագ մասնագետը ենթակա և հաշվետու է Բաժնի պետին:</p> <p><b>1.3 Փոխարինող պաշտոնի կամ պաշտոնների անվանումները</b> Բաժնի ավագ մասնագետի բացակայության դեպքում նրան փոխարինում է բաժնի գլխավոր մասնագետը:</p> <p><b>1.4 Աշխատավայրը</b> Հայաստանի Հանրապետության Լոռու մարզ, ք.Վանաձոր, Հայքի Հրապարակ 1</p>
<p><b>2. Պաշտոնի բնութագիրը</b></p> <p><b>2.1 Աշխատանքի բնույթը, իրավունքները, պարտականությունները</b></p> <p>1) մասնակցել մարզային նշանակության ոռոգման ցանցերի կառուցման, պահպանման և շահագործման աշխատանքներին</p> <p>2) մասնակցել մարզի տարածքում մատակարարվող ոռոգման ջրի հաշվառմանը, հսկողություն իրականացնել ջրի տեղաշարժի, կորուստների և խախտումների նկատմամբ</p> <p>3) մշակել ոռոգման համակարգերում ջրի կորուստների նորմատիվները</p> <p>4) իրականացնել մարզում բուսաբուծության ոլորտում գործունեություն իրականացնող սուբյեկտների աջակցության ծրագրերի մշակումը և իրականացվող ծրագրերի ընթացքը:</p> <p>5) մասնակցել մարզում գյուղատնտեսական մշակաբույսերի սերմնաբուծության, բույսերի, բուսական արտադրանքի ու կարանտինային հիվանդությունների ու առավել վնասակար օրգանիզմների դեմ միջոցառումներին:</p> <p>6) մասնակցել մարզում օրգանական գյուղատնտեսության ոլորտում առաջնային խնդիրների բացահայտմանը, պետական աջակցության ծրագրերի մշակմանը և իրականացման մոնիթորինգին</p> <p>7) մասնակցել բուսաբուծության և բանջարաբուծության ոլորտում ծրագրերի մոնիթորինգի գնահատմանը</p> <p>8) մասնակցել մարզի գյուղատնտեսական հողերի օգտագործման արդյունավետության բարձրացման ու մելիորացիայի (բարելավման) ուղղությամբ միջոցառումներին</p> <p>9) իրականացնել բուսաբուծությամբ զբաղվող առևտրային կազմակերպություններին և գյուղացիական տնտեսություններին մասնագիտական խորհրդատվության</p>

տրամադրում, աջակցել մարզի գյուղացիական տնտեսություններին և ագրարային ոլորտի տնտեսվարողներին ոռոգման և գյուղատնտեսության (այդ թվում՝ օրգանական) բնագավառում (սերմնաբուծություն, բանջարաբուծություն, բուսաբուծություն) մասնագիտական խորհրդատվության տրամադրման գործում

10) մասնակցել ֆիզիկական և իրավաբանական անձանց նամակների, դիմումների և բողոքների քննարկմանը ու իրավասության սահմաններում բարձրացված հարցերի լուծման ապահովող առաջարկությունների ներկայացմանը

11) ուսումնասիրել բնական աղետների (սելավներ, հորդառատ անձրևներ, կարկուտ, ցրտահարություններ) հետևանքով գյուղատնտեսական մշակաբույսերի հասցված վնասները և առաջացած խնդիրները

### **Իրավունքները՝**

1) ուսումնասիրել մարզային նշանակության ոռոգման ցանցերի կառուցման, պահպանման և շահագործման աշխատանքների համար առկա ռեսուրսները, կատարել վերլուծություններ մարզային նշանակության ոռոգման համակարգերի նպատակային շահագործումն ապահովելու ուղղությամբ

2) համագործակցել և մասնագիտական աշխատանքային խմբով քննարկել մարզում ջրօգտագործողների ընկերությունների և ջրօգտագործողների միությունների գործունեության աշխատանքները, կատարել ուսումնասիրություններ

3) աշխատանքային պլանով պայմանավորված կատարել այցելություններ, ուսումնասիրել ոռոգման համակարգերը և դրանցում ջրի կորուստների պատճառները

4) ուսումնասիրել մարզում գյուղատնտեսական մշակաբույսերի բուսաբուծության բնագավառը, ագրոկանոնների պահպանման ուղղված միջոցառումները, վերլուծել գյուղատնտեսության բնագավառում իրականացվող ծրագրերը

5) ուսումնասիրել տարածված հիվանդություններն ու վնասատուները

6) ուսումնասիրել մարզում օրգանական գյուղատնտեսական բնագավառը, ագրոկանոնների պահպանման ուղղված միջոցառումները, վերլուծել օրգանական գյուղատնտեսության բնագավառում իրականացվող ծրագրերը

7) ուսումնասիրել մարզում բուսաբուծության և բանջարաբուծության ոլորտը, վերլուծել բնագավառում իրականացվող ծրագրերը

8) ուսումնասիրել և վերլուծել գյուղատնտեսական հողատեսքերը, տալ մասնագիտական եզրակացություն

9) ուսումնասիրել ագրարային ոլորտի տնտեսվարողների աշխատանքային գործունեությունը

10) քննարկումների կազմակերպում դիմում ներկայացրած ֆիզիկական և իրավաբանական անձանց հետ, խնդիրների վերաբերյալ տեղեկատվության ստացում համապատասխան մարմիններից

11) այցեր համայնքներ, տեղում ուսումնասիրություններ բնական աղետների հետևանքով առաջացած խնդիրների վերաբերյալ

### **Պարտականությունները՝**

1) համապատասխան մարմին կամ գերատեսչությանը ներկայացնել տեղեկատվություն և առաջարկություններ մարզային նշանակության ոռոգման ցանցերի կառուցման, պահպանման ու շահագործման աշխատանքների վերաբերյալ

2) վերլուծել ջրօգտագործողների ընկերությունների և ջրօգտագործողների միության գործունեության կատարված աշխատանքները, ամփոփել արդյունքները և ներկայացնել համապատասխան առաջարկություններ

3) ներկայացնել առաջարկություններ ոռոգման ջրի նպատակային օգտագործման վերաբերյալ, գտնել ուղիներ ոռոգման ջուրը ճիշտ և հավասարաչափ բաշխման,

համակարգերում ջրի կորուստների նվազեցման ուղղությամբ

4) սահմանված ժամկետներում ապահովել ոռոգման ոլորտում և գյուղատնտեսության բնագավառում ծրագրերի իրականացման աշխատանքների կատարումը

5) ուսումնասիրել և տարածված հիվանդություններն ու վնասատուները և ձեռնարկել միջոցառումներ

6) ագրոկանոնների պահպանման ուղղված միջոցառումների վերաբերյալ ներկայացնել տեղեկատվություն

7) աջակցել բուսաբուծության և բանջարաբուծության ոլորտում, իրականացվող ծրագրերին

8) արձանագրել բնական աղետների հետևանքով առաջացած վնասները, կազմել տնտեսական գնահատումը և ներկայացնել համապատասխան մարմին

### **3. Պաշտոնին ներկայացվող պահանջները**

#### **3.1 Կրթությունը, որակավորման աստիճանը**

Բարձրագույն կրթություն

#### **3.2 Մասնագիտական գիտելիքները**

Ունի գործառույթների իրականացման համար անհրաժեշտ գիտելիքներ

#### **3.3 Աշխատանքային ստաժը եւ (կամ) աշխատանքի բնագավառում փորձը**

Հանրային ծառայության առնվազն մեկ տարվա ստաժ կամ երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ գյուղատնտեսության բնագավառում՝ երեք տարվա աշխատանքային ստաժ:

#### **3.4 Անհրաժեշտ կոմպետենցիաները**

##### **ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ ԿՈՄՊԵՏԵՆՑԻԱՆԵՐ**

- Խնդրի լուծում
- Հաշվետվությունների մշակում
- Տեղեկատվության հավաքագրում, վերլուծություն
- Բարեվարքություն

##### **Ընտրանքային կոմպետենցաներ**

- կոնֆլիկտների կառավարում
- Ժամանակի կառավարում
- տեղեկատվական տեխնոլոգիաներ և հեռահաղորդակցություն
- փաստաթղթերի նախապատրաստում
- փոփոխությունների կառավարում

## **4. Կազմակերպական շրջանակ**

### **4.1. Աշխատանքի կազմակերպման և ղեկավարման պատասխանատվությունը**

Պատասխանատու է կառուցվածքային ստորաբաժանման աշխատանքների բնույթով պայմանավորված մասնագիտական գործունեության վերջնարդյունքին նպաստող միջանկյալ արդյունքի ստեղծման համար:

### **4.2. Որոշումներ կայացնելու լիազորությունները**

Կայացնում է որոշումներ կառուցվածքային ստորաբաժանման աշխատանքների բնույթով պայմանավորված՝ մասնագիտական գործունեության վերջնարդյունքին նպաստող միջանկյալ արդյունքի ստեղծման շրջանակներում:

### **4.3. Գործունեության ազդեցությունը**

Ունի տվյալ մարմնի նպատակների և խնդիրների իրականացման համար մասնագիտական գործունեության տարածքային ազդեցություն:

#### **4.4. Շփումները և ներկայացուցչությունը**

Իր իրավասության շրջանակներում շփվում և որպես ներկայացուցիչ հանդես է գալիս համապատասխան մարմնի այլ կառուցվածքային ստորաբաժանումների ներկայացուցիչների, այլ մարմինների և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների հետ, հանդես է գալիս համապատասխան մարմնի ներսում և համապատասխան մարմնից դուրս ձևավորված մասնագիտական աշխատանքային խմբերում:

#### **4.5. Խնդիրների բարդությունը և դրանց լուծումը**

Իր լիազորությունների շրջանակներում բացահայտում է մասնագիտական խնդիրներ և ներկայացնում խնդիրների լուծման տարբերակներ և մասնակցում է կառուցվածքային ստորաբաժանման առջև դրված խնդիրների լուծմանը:

ՀՀ ԼՈՒՌԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ  
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

12/27/19



ԱՐԹՈՒՐ ՄԽԻԹԱՐՅԱՆ

Ա.ՄԽԻԹԱՐՅԱՆ